



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**

**ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ**

**2019- 2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ**

Մշակվել է համայնքի ղեկավարին կից գործող ՀՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից

Ներկայացվել է համայնքի ղեկավար Սաշա Բավեյանի կողմից

Հաստատվել է Երանոս համայնքի ավագանու 16.01.2019 թ. N 3 -Ա որոշմամբ

ԵՐԱՆՈՍ 2019 Թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք-----	2
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն-----	3
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն-----	3
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը-----	5
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը-----	10
2.4.Պատվիրակված ծառայություններ-----	
2.5.Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները-----	15
2.6.Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ-----	19
2.7. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների(ՈԻԹՀՍ) վերլուծություն-----	19
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում-----	20
3.1. Համայնքի զարգացման տեսլական-----	20
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ-----	21
4. ՀՀԶԾ ֆինանսավորում-----	21
5. ՀՀԶԾ մոնիթորինգի անձնագիր-----	21

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ  
ՀԱՐԳԱՐԺԱՆ ԵՐԱՆՈՍՅԻՆԵՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս համայնքի 2019-2023թթ. հնգամյա զարգացման ծրագրի (այսուհետ՝ ՀՀԶԾ) նպատակն է սահմանել համայնքի զարգացման տեսլականը, նոր ժամանակներում՝ նոր մոտեցումներով և գաղափարներով ընդգծել դրանց հասնելու հատակ մեթոդներն ու ճանապարհները: Երանոսի զարգացման 2019-2023թթ. հնգամյա ծրագրում արտացոլված են իմ նախընտրական ծրագրի դրույթները: ՀՀԶԾ-ն այն հիմնական փաստաթուղթն է, որը նախատեսում է առաջիկա հինգ տարիների ընթացքում համայնքային խնդիրների լուծումները, որոնց հիմքում բնակչության կյանքի որակի բարելավումն է, անհրաժեշտ պայմանների ստեղծումն ու ապահովումը: Բոլորս էլ քաջ գիտակցում ենք, որ մեր համայնքում դեռևս բազմաթիվ անելիքներ կան, որոնց լուծման արդյունքում կունենանք ուժեղ ու զարգացած համայնք: Հնգամյա զարգացման ծրագիրը կազմվել է հաշվի առնելով ազգաբնակչության կարծիքը, համայնքում առկա հիմնախնդիրների առաջնահերթությունները և ֆինանսատնտեսական ռեսուրսների գնահատման մակարդակը:

ՀՀԶԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը
- համայնքի բնակչության թվաքանակը
- համայնքում առկա ենթակառուցվածքները և մատուցվող հանրային ծառայությունները
- համայնքի առանձնահատկությունները և համայնքում առկա վտանգները (ոչսկերը)

ՀՀԶԾ -ն համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համար վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որն առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը, համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացումը, բնակչության սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովումը, նրանց կյանքի ու կենցաղի բարեկեցիկ միջավայրի ստեղծումը՝ ձգտելով համայնքի զարգացման մեր տեսլականի իրականացմանը: ՀՀԶԾ-ն ենթադրում է նաև 2019-2023թթ. բյուջետային ծրագրեր իրականացնելիս՝ որոշակի ռեսուրսներ ներդնելու պարագայում ձեռք բերել նոր արդյունքներ, որը կապահովի նոր որակի կառավարում, ներդրված ռեսուրսների և ստացված արդյունքների միջև ստեղծելով ինտեգրված կապ, ապահովելով բյուջետային ծրագրերի միջոցառումների ու գործողությունների կատարման թափանցիկությունն ու վերահսկման արդյունավետ մեխանիզմը: Մա հնարավորություն է տալիս ՀՀԶԾ-ի հիման վրա պլանավորել համայնքի առկա ֆինանսական միջոցները, դրանք օգտագործել նպատակային ու խնայողաբար, արդյունավետ և հրապարակային: Իմ կողմից կարևորվում է նաև համայնք-մասնավոր հատված համագործակցության հաստատումը համայնքի տարբեր ոլորտներում՝ միմիայն հետապնդելով նպատակ՝ ապահովելու անհրաժեշտ ներդրումներ, բոլոր ոլորտներում բարձրացնել ոչ միայն կառավարման արդյունավետությունը, այլ նաև մատուցվող ծառայությունների որակը: Համայնքի զարգացման հիմնական ուղղությունները հետևյալ են.

Ճանապարհների բարեկարգման ու ասֆալտապատման աշխատանքների իրականացում, նոր ձևավորված թաղամասերում ջրամատակարարման, ոռոգման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման համակարգերի կառուցում, ծայրամասային թաղամասերում արտաքին լուսավորման ցանցի կառուցում, կաթիլային ոռոգման համակարգով տանձենու նոր այգու հիմնում, մշտական աջակցություն փոքր և միջին բիզնեսին, բնակչության իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Համայնքի հիմնական խնդիրներն են՝ բնակչության ցածր կենսամակարդակը, սոցիալ-տնտեսական ոչ բավարար պայմանները, գործազրկության բարձր մակարդակը:

ՀՀԶԾ-ով որդեգրված աշխատանքային նոր ռազմավարությամբ առավել կարևորվում են ազգաբնակչությանը համայնքի կողմից ծառայությունների արդյունավետ մատուցումը և համայնքի խնդիրների աստիճանական լուծումը: ՀՀԶԾ-ն համայնքի բնակիչների շահերից բխող կենսական նշանակություն ունեցող ծրագրերի փաթեթ է, որոնց լուծման փուլերը դառնում են ծրագրի բաղադրիչներ, որն իրականացնելու ենք միասին, համատեղ, միասնական ջանքերով, փոխադարձ վստահության մթնոլորտում՝ ի նպաստ ազգաբնակչության և հանուն Երանոսի:

## **2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

### **2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

#### **ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ**

Գեղարքունյաց լեռնաշղթայի հարավ-արևելյան ստորոտը, որտեղ գտնվում է Երանոս գյուղը, հարուստ է ամրոցներով, դամբարանադաշտերով, միջնադարյան գյուղատեղիներով, եկեղեցիներով ու մատուռներով և բազմաթիվ խաչքարերով, որոնք սփռված են գերեզմանոցներում և գյուղատեղիներում: Երանոս անունը հունարենից թարգմանելիս նշանակում է «Խաղաղասեր» կամ «Խաղաբարար»: Գյուղը կազմավորվել է 1828 թ-ին, ներկայիս ազգաբնակչության նախնիները հիմնականում գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառի Խաստուր գյուղից: Գյուղի հնագույն Ձագ անունը հիշատակված է և Ստեփանոս Օրբելյանի մոտ և «Ջամբոխ» աշխատության մեջ՝ Շողագա վանքի վիճակի գյուղերի ուսումնասիրությունների շարքում: «Շեն» (Դվոր) ամրոցը (մ.թ.ա 2-րդ-1-ին հազարամյակ) կարևոր դեր է կատարել Սևանի ավազանի պաշտպանական կառույցների համակարգում, ունեցել է առափնյա ճանապարհը վերահսկող նշանակություն: Ամրոցը պարսպապատված է եղել՝ կառուցված խոշոր, կանոնավոր քարերից: Հողի կտրվածքներում երևում է մշակութային հզոր շերտ: Գյուղից մոտ 2 կմ արևմուտք՝ ժայռոտ բարձունքի գագաթին, գտնվում է «Նեղ Բողագ» ամրոցը (մ.թ.ա 3-րդ-2-րդ հազարամյակներ)՝ շրջապատված խոշոր անկանոն քարերից կառուցված աշտարակավոր պարիսպներով: Առկա են բազմաթիվ շինությունների հետքեր: Գյուղը հարուստ է բազմաթիվ դամբարանադաշտերով, որոնք վերագրվում են մ.թ.ա 2-րդ-1-ին հազարամյակներին և ուշ բրոնզի –վաղ երկաթի ժամանակաշրջաններին: Դամբարանադաշտերը հարուստ են կրովեխներով, երևում են թաղման խեցերը:

Գյուղատեղիներից հայտնի են «Կուռու ավերակներ» և «Շողան աղբյուր» գյուղատեղիները: Առկա են շինությունների հետքեր, ավերված եկեղեցիների մնացորդներ՝ շրջապատված գերեզմանաքարերով: Սուրբ Աստվածածին եկեղեցին գտնվում է գյուղամիջում, որը շրջապատված է բազմաթիվ խաչքարերով և տապանաքարերով հարուստ ընդարձակ բակով: Մատուռներից պահպանվել են Սուրբ Հովհաննես անունով եկեղեցի-սրբավայրը(1215թ.), Թուխ Մանուկ, Խոնարհված սուրբ, Խաչեր, Շողան աղբյուր, Սուրբ Սոֆյա մատուռները, դամբարաններ, 5-6-րդ դարերի կոթողներ և 15-17թթ. խաչքարեր:

Երանոս համայնքը գտնվում է Գեղարքունիքի մարզի արևմտյան մասում: Համայնքը հյուսիս-արևելքից սահմանակից է Սևանա լճին, հարավից՝ Վարդաձոր համայնքին, արևմուտքից՝ Արարատի մարզին և Գեղարքունիք համայնքին:

Երանոս համայնքի վարչական տարածքը կազմում է 5335,78 հեկտար, որից բնակավայրի կառուցապատված տարածքը կազմում է 431,06 հեկտար: Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 118 կմ է, մարզկենտրոն Գավառից՝ 27 կմ, տարածաշրջանային կենտրոն Մարտունուց՝ 17 կմ: Համայնքի տարածքով անցնում է Մ-10՝ Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության և Երանոս-Ծակքար միջհամայնքային ճանապարհները: Բնակավայրի կառուցապատված հատվածը ծովի մակերևույթից գտնվում է 1950-2050 մետր բարձրության վրա, իսկ համայնքը գտնվում է 1898-2300 մետր բացարձակ բարձրությունների վրա գտնվող տարածքում: Համայնքի կլիման ինչպես Գեղարքունիքի մարզը ամբողջությամբ գտնվում է կլիմայական ցուրտ գոտում: Համայնքի բարձրության նիշի հետ կապված բնորոշ է զով, քամոտ, օպտիմալ խոնավությամբ ամառ՝ միջին ջերմաստիճանը հուլիսին +18 °C, օդի հարաբերական խոնավությունը՝ 45-60 %, քամու միջին արագությունը՝ 3.0-6.0 մ/վ, իսկ ձմեռը շատ

ցուրտ է, քամոտ, խոնավ: Հունվարին միջին ջերմաստիճանը՝ -5° C –ից մինչև -12 °C, հարաբերական խոնավությունը՝ 70% և ավելի, քամու միջին արագությունը՝ 5.0-7.0 մ/վ: Համայնքում օդի միջին տարեկան ջերմաստիճանը՝ 4.6-5.4 °C, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ +34 °C, բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ - 33 °C: Օդի հարաբերական խոնավության միջին տարեկանը՝ 68-70 % է, տեղումների քանակը տարեկան՝ 489-492 մմ, ձնածածկույթի բարձրությունը՝ 37-ից մինչև 75սմ, հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 108 սմ:

Համայնքի տարածքն ընդգրկում է ցածր և միջին լեռնաանտառային, միջին լեռնային տափաստանային, միջին լեռնային, մարգագետնատափաստանային և մասամբ բարձր լեռնային մերձալպյան գոտիներ: Բնակավայրն ամբողջովին տափաստանային գոտում է, իսկ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Սևան» ազգային պարկի հատվածում ռելիեֆը համեմատաբար հարթ է, բնակավայրը շրջապատում են ոչ բարձր բլրանման լեռներ:

Երանոս համայնքի հիմնադրման օրվանից առ այսօր անցկացված մարդահամարի տվյալներով համայնքի բնակչությունը թվաքանակը ըստ տարիների կազմել է 1831թ-ին՝ 332, 1897թ-ին՝ 1794, 1926թ-ին՝ 2676, 1939թ-ին՝ 3537, 1959թ-ին՝ 3277, 1970թ-ին՝ 4370, 1979թ-ին՝ 4509, 1989թ-ին՝ 4960, 2001թ-ին՝ 5306, 2011թ-ին՝ 5479 մարդ:

Համայնքի առկա բնակչության թիվը 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 5376 մարդ:

Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմերը բերված են աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 1. Համայնքի բնակչությունը ըստ տարիքային խմբերի և սեռերի

Հ/Հ	Տարիքային խմբեր	Արական	Իգական	Ընդամենը
1	0-6 տարեկան	255	187	442
2	7-17 տարեկան	524	355	879
3	18-63 տարեկան	1895	1686	3581
4	63-ից բարձր տարեկան	204	275	479
	Ընդամենը	2878	2503	5381

Աղյուսակ 2. Համայնքի բնակչության սոցիալական կազմը

Սոցիալական կազմը	Քանակը
Կենսաթոշակառուներ	389
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	11
Արցախյան պատերազմի մասնակիցներ	22
Հաշմանդամներ	131
Տնային տնտեսությունների թիվը	1680
Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	238
Հայրենական և արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքներ	3

2018 թվականի հոկտեմբերի 21-ին տեղի ունեցած Երանոս համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություններում ընտրվել է համայնքի նոր ղեկավար, իսկ գործող համայնքի ավագանու ընտրությունները կայացել են 2016 թվականի հոկտեմբերի 2-ին, այս պահի դրությամբ համայնքի ավագանին ունի 8 անդամ:

Համայնքի ղեկավարի կողմից ձևավորվել է համայնքապետարանի աշխատակազմը՝ բաղկացած 17 աշխատակցից: Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը ներկայացվում է (հավելված 1-ի տեսքով):

Համայնքի տարածքում գործում է համայնքային ենթակայության երեք ոչ առևտրային կամակերպություններ, ստորև աղյուսակում ներկայացնում ենք կազմակերպությունների անվանումները և դրանցում նախատեսված հաստիքների թվաքանակը.

Աղյուսակ 3. Համայնքի ՀՈԱԿ-ների անվանումները և նախատեսված հաստիքների քանակը

ՀՈԱԿ-Ի ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
ԵՐԱՆՈՍԻ ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ	16
ԵՐԱՆՈՍԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ	9
ԵՐԱՆՈՍԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	8

Համայնքային ծառայությունն առավել որակյալ դարձնելու համար անհրաժեշտ է՝

- կազմակերպել ավագանու գործունեությունն առավել արդյունավետ՝ ապահովելով բազմակարծության և բացարձակ թափանցիկության աշխատանքային միջավայր,
- ավագանու նիստերի ընթացքում ապահովել բնակիչների մասնակցությունը իրենց հուզող հարցերի քննարկմանը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՏԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ**

Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ:

Աղյուսակ 4. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի ցանկը

Նախադպրոցական հիմնարկ	բավարար
Մշակույթի տուն և NN1,2 գրադարաններ	բավարար
Սոցիալ-կենցաղային նշանակության այլ շենքեր և շինություններ	բավարար
Հուշարձաններ	բավարար
Ներհամայնքային նշանակության ջրամատակարարման համակարգ	բավարար
Ներհամայնքային նշանակության ջրահեռացման համակարգ	բավարար
Ներհամայնքային նշանակության ոռոգման համակարգ	բավարար
Վարչական շենքեր	բավարար
Ներհամայնքային փողոցներ և հրապարակներ	բավարար
Ներհամայնքային նշանակության ճանապարհներ	բավարար
Գերեզմանատուն	բավարար

**ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համայնքի վարչական տարածքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպություններն են՝ <<Երանոսի թիվ 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ (1-ին փողոց թիվ 53), <<Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ (6-րդ փողոց թիվ 8) և <<Երանոսի բժշկական ամբուլատորիա>> ՊՈԱԿ (11-րդ փողոց թիվ 52):

Համայնքում չկան գործող ոչ կառավարական կազմակերպություններ (ՀԿ-ներ, հիմնադրամներ և այլն):

**2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ**

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Երանոս համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 10 - ի N 10-Ն որոշումով հաստատվել է համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագիծը: Համայնքապետարանի աշխատակազմի կողմից վարվում է համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը:

Համայնքի վարչական տարածքում արդեն սկսվել են մեր հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող <<Իրան –Հայաստան 400 կՎ հզորությամբ երրորդ էլեկտրահաղորդման օղային գծի>> կառուցապատման աշխատանքները:

Համայնքային սեփականություն հանդիսացող ներհամայնքային խմելու ջրի մատակարարման համակարգը կառուցվել է 1970 թվականների կեսերից, գտնվում է բավարար վիճակում:

Ներհամայնքային ոռոգման համակարգը ազգաբնակչությանը սպասարկում է երկու եղանակով՝ մեխանիկական (ջրհան կայանից մատակարարվող խողովակաշարի) միջոցով՝ կառուցված 1978թ. գտնվում է բավարար վիճակում(ծայրամասային որոշակի հատված ենթակա է անհապաղ հիմնանորոգման), և ինքնահոս (Շողան աղբյուր կոչվող տարածքից հողե հունով առվի միջոցով): Համայնքում բացակայում է ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի): Համայնքում <<Երանոսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում>> ՀՈԱԿ-ի կողմից կանոնավոր կերպով իրականացվում է աղբահանության աշխատանքները: Աղբամանների ու աղբահավաք մեքենայի բացակայությունը իր բացասական ազդեցությունն է թողում սանիտարահիգիենիկ պայմանների վրա: Մայրուղուց համայնքի կենտրոնական ճանապարհը մինչև գերեզմանոց, ինչպես նաև միջհամայնքային ճանապարհը ապահովված են փողոցային լուսավորությամբ: Համայնքի տարածքում առկա են գերեզմանատներ, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 3,2 հեկտար, ձախ կողմի գերեզմանոցը լրիվ ցանկապատված է մետաղական ցանցով:

#### Հիմնախնդիրներ

- համայնքի գլխավոր հատակագծի դրույթների իրականացում ըստ ժամանակացույցի
- համայնքի փողոցային ցանցի անբարեկարգ իրավիճակ
- գերեզմանատան որոշ տարածքների պարհսպների բացակայություն
- սպասարկման օբյեկտների ոչ համաչափ տեղաբախշում
- զբոսաշրջության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայություն
- հատուկ նշանակության՝ աղբահավաք մեքենայի բացակայություն
- համայնքում կենցաղային աղբի տեսակավորման և վերամշակման բացակայություն

### ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքի վարչական տարածքում բազմաբնակարան շենքեր գոյություն չունեն, կան միայն բնակելի առանձնատներ:

Բնակելի առանձնատների թիվը կազմում է 1134 տուն և դրանց ընդհանուր մակերեսը կազմում է 142736 քմ:

Համայնքի առանձնատների կառուցումը սկսվել է անցած դարի 60-ական թվականներից, մեծ մասը արդեն վերանորոգման կարիք ունեն:

Վթարային առանձնատների թիվը - 18

Կիսակառույց առանձնատների թիվը - 63

### ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 5335,78 հեկտար, այդ թվում՝

- գյուղատնտեսական նշանակության հողեր - 4309,94 հա
- բնակավայրերի նշանակության հողեր - 431,06 հա
- արդյունաբերության, ընդերքօգտ. և այլ արտադրական նշանակության հողեր - 35,52 հա
- էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր - 11,98 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր - 531,49 հա
- ջրային ֆոնդի հողեր - 15,80 հա

Բնակավայրի տարածքը կազմում է 431,06 հեկտար, որից բնակելի կառուցապատման հողեր՝ 323,03 հեկտար, հասարակական կառուցապատման հողեր՝ 6,79 հեկտար, ճանապարհներ՝ 38,37 հեկտար, այլ հողեր՝ 62,87 հեկտար:

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է 0,55 հեկտար, այդ թվում՝ 0,12 հեկտար ջրովի վարելահող, 0,33 հեկտար անջրդի վարելահող, 0,10 հեկտար բնական խոտհարք: Հողի սեփականաշնորհման մասնակցած ընտանիքների թիվը կազմում է 1254 ընտանիք:

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերը կազմում են 1988,69 հեկտար, որից՝ 1829,29 հեկտարը գյուղատնտեսական նշանակության, 122,10 հեկտարը բնակավայրերի նշանակության, 2,37 հեկտարը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 3,06 հեկտարը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 17,49 հեկտարը հատուկ պահպանվող տարածքների, 14,38 հեկտարը ջրային ֆոնդի հողեր:

### **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Համայնքում բնակիչները իրենց տնամերձ հողամասերում հիմնականում աճեցնում են կարտոֆիլ, բանջարաբոստանային կուլտուրաներ, ինչպես նաև զբաղվում պտղաբուծությամբ (խնձոր, տանձ, սալոր), իսկ վարելահողերում մշակում են հացահատիկային, կերային մշակաբույսեր՝ հիմնականում սեփական կարիքները հոգալու համար:

Համայնքի ոռոգելի հողատարածքները կազմում են 304,5 հեկտար: 2015 թվականին իրականացվել է արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցապատման աշխատանքներ, որն իր դրական ազդեցությունը թողեց թե անասունների մթերատվության, կաթնատվության և թե դրանց քանակի ավելացման գործում: 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 1775, այդ թվում կովեր՝ 676, մանր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 348, մեղվաբնուսանիքների քանակը կազմել է 345, հավերի և այլ թռչուններինը՝ 11500: Համայնքում հիմնականում արտադրվում են կարտոֆիլ, կաթ, միս, բուրդ, ձու, մեղր, ընկույզ, խնձոր, տանձ, սալոր, բալենի: Համայնքի բնակիչները լուրջ խնդիրներ ու դժվարություններ ունեն արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում: Դաշտամիջյան ճանապարհները գտնվում են բավարար վիճակում, յուրաքանչյուր գարնանը պարբերաբար դաշտամիջյան ճանապարհները ընթացիկ նորոգման աշխատանքների միջոցով վերանորոգվում են: Համայնքում առկա են 5 տրակտոր իրենց կցվող գյուղատնտեսական գործիքներով, գյուղատնտեսական տեխնիկաները հիմնականում խորհրդային ժամանակաշրջանի արտադրության են՝ գտնվում են ֆիզիկապես և բարոյապես մաշված վիճակում: Խիստ անհրաժեշտություն է նոր տեխնիկաների ձեռք բերումը:

### **ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ**

Համայնքում աղբահանությունը իրականացվում է <<Երանոսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում>> ՀՈԱԿ-ի միջոցով կենցաղային աղբը ու թափոնները տեղափոխվում են համայնքի աղբավայր և տոփանվում են հողային շերտով: Բնության և շրջակա միջավայրի պահպանումը տարբեր տեսակի աղտոտումներից նվազեցնելու համար տարվում են լայն բացատրական աշխատանքներ համայնքի բնակչության հետ:

Արոտավայրերի կառավարումը իրականացվում է <<Երանոս համայնքի արոտօգտագործողների միավորում>> ՄԿ-ի կողմից՝ խստորեն պահպանվում են արոտարածեցման հաստատված գրաֆիկը: Անասունների ջրման գործընթացը իրականացվում է արոտավայրերում գոյություն ունեցող ջրարբիացման ցանցի միջոցով: Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված 502,52 հեկտար հատուկ պահպանվող տարածքի պահպանումն ու խնամքը իրականացվում է <<Սևան>> ազգային պարկ ՊՈԱԿ-ի կողմից: Համայնքի ոռոգման, խմելու ջրի ջրամատակարարման համակարգերը գտնվում են բավարար վիճակում, համայնքը ջրահեռացման համակարգ (կոյուղի) չունի, ջրահեռացումը հիմնականում կազմակերպվում է բնակիչների կողմից իրենց հողամասերում սեպտիկ հորեր կառուցելու միջոցով: Համայնքի վարչական սահմաններում տարածված կենդանիներն են՝ գայլը, աղվեսը, գորշուկը, կզաքիսը, բեզուրյան այծը, կրծողներից՝ ճագարամուկը, գետնյասկյուռը, թռչուններից՝ անգղը, արծիվը, կռունկը, լորը, արտույտը, սարյակը, կկուն, ճնճուկը, սողուններից՝ վահանագլուխ իժը, գյուրզան: Բուսականությունից հանդիպում են վայրի ցորեն, վայրի կորնզան, մասրենու և ասպիրակի թփուտներ, ինչպես նաև հանդիպում են նաև դեղաբույսերի զանազան տեսակներ:

### **ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**



Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 43 կմ, կենտրոնական ճանապարհը մայրուղուց մինչև գերեզմանոց 4 կմ ասֆալտապատված է, ասֆալտապատված է նաև Երանոս-Օակքար միջհամայնքային ճանապարհը՝ 0,95 կմ,ինչպես նաև գյուղապետարանից դեպի աջ 9-րդ փողոցից սկսվող դեպի 8-րդ փողոցի սկբնամաս տանող ճանապարհը: Համայնքի մնացած ճանապարհներն ու փողոցները հիմնականում խճապատ են: Համայնքից մոտակա Ներքին Գետաշեն գյուղի շուկան 12կմ է՝ ճանապարհը լրիվ ասֆալտապատված է: Համայնքի տարածքում մետաղական խողովակներով կառուցված են ձորակների վրա չորս անցում-կամրջակներ, որոնք գտնվում են գերազանց վիճակում: Համայնքում օրական երկու անգամ աշխատում է Երանոս-Մարտունի ավտոբուսը, մարզկենտրոնի հետ տրանսպորտային կապ չկա, համայնքի տարածքում մարդատար և երթուղային տաքսիներ չեն գործում: Համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշաններ տեղադրված են թիվ 1 միջնակարգ դպրոցի դիմաց և մայրուղուց գյուղ մտնող ճանապարհի սկզբնամասում:

### **ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Համայնքի տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների թիվը կազմում է 13 հատ, այդ թվում՝

- առևտրի փոքր օբյեկտներ-9 հատ, որոնք հիմնականում զբաղվում են ակոհոլային խմիչքների, ծխախոտի և այլ տնտեսական ապրանքների վաճառքով
- բենզինի լցակայան - 1 հատ
- գազի լիցքավորման ճնշումային կայան -1 հատ
- հանրային սննդի (հանդիսությունների սրահ) օբյեկտ – 1 հատ
- դեղատուն - 1 հատ

### **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

Համայնքի տարածքում գործում է 2 դպրոց՝ <<Երանոսի թիվ 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ(1-ին փողոց թիվ 53) և <<Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ (6-րդ փողոց թիվ 8): Թիվ 1 միջնակարգ դպրոցի աշխատողների թվաքանակը՝ 53, դպրոցականների քանակը՝ 381, շենքային պայմանները գտնվում են սեյսմիկ առումով խոցելի վիճակում, գույք ձեռք բերելու կարիք ունի: Թիվ 2 միջնակարգ դպրոցի աշխատողների թվաքանակը՝ 40, դպրոցականների քանակը՝ 247, շենքային պայմանները վթարային, խիստ հրատապ է դպրոցական նոր շենքի կառուցումը:

Նախադպրոցական հիմնարկի <<Երանոսի մուր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ն (Վարդաձորի խճուղի թիվ 3) ունի 3 խումբ, 120 սան, 16 աշխատող, կարիք ունի շենքի մասնակի հիմնանորոգման,լրկալ ջեռուցման անցկացման ու նոր գույքի ձեռք բերման:

### **ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Համայնքում գործում է <<Երանոսի մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ը (6-րդ փողոց թիվ 10), որը կազմի մեջ է մտնում միավորված NN1,2 գրադարանները, ունի 9 աշխատող, գործում է պարի, կարատեի խմբեր, ծերերի համար առանձնացված սենյակներ,շենքային պայմանները բավարար են, կարիք ունի ներքին հարդարման ու նոր գույքերի ձեռք բերման: Երիտասարդությանը հատկացվել է առանձին սենյակ, որտեղ հիմնականում խաղում են շախմատ, շաշկի, նարդի և մարզադահլիճը, որտեղ խաղում են վոլեյբոլ, բասկետբոլ, բիլյարդ:Մշակույթի կենտրոնի շենքը նույնպես ունի մասնակի հիմնանորոգման ու լրկալ ջեռուցման համակարգի կառուցման,մարզադահլիճը հիմնովին հիմնանորոգման ու գույքի ձեռք բերման կարիք ունի:

### **ԱՌՈՂՁԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ**

Համայնքի տարածքում գործում է <<Երանոսի բժշկական ամբուլատորիա>> ՊՈԱԿ-ը (11-րդ փողոց, թիվ 52), որը համալրված է 2 ընտանեկան բժիշկներով, առաջին բժշկական օգնության ժամանակակից սարքավորումներով, բուժաշխատողների ընդհանուր թվաքանակը՝ 9, շենքը շահագործման է հանձնվել 2006 թվականին, շենքային պայմանները գերազանց՝ ապահովված է խմելու ջրով, գազաֆիկացված է:

Համայնքի թիվ 1 միջնակարգ դպրոցը գործում է մարզադահլիճը և ֆուտբոլի խաղահրապարակը՝ որտեղ դպրոցականներից բացի կեսօրից հետո օգտվում են նաև երիտասարդները, թիվ 2 միջնակարգ դպրոցում գործում է մարզադահլիճը և խաղահրապարակը:

### **ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ**

Համայնքի վարչական սահմաններում՝ բնական աղբյուրների հարակից տարածքներում և ազգային պարկի տարածքում կան հանգստի գոտիներ, որտեղ համայնքի բնակիչները և հյուրերը անցկացնում են իրենց հանգիստը: Մանկապարտեզի բակային տարածքում կա մանկապարտեզ հաճախող երեխաների համար խաղահրապարակ:

### **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

Համայնքում կան աշխատունակ մարդիկ, որոնք մշտական աշխատանքով զբաղված են միայն գյուղատնտեսական ոլորտում, սակայն Մարտունու զբաղվածության կենտրոնում որպես գործազուրկ գրանցված չեն, քանի որ համաձայն գործող ՀՀ օրենսդրության՝ համայնքում հողի սեփականաշնորհման գործընթացի մասնակիցները չեն համարվում գործազուրկ:

Համայնքի 1680 ընտանիքներից 238-ը ընդգրկված են ընտանեկան նպաստի համակարգում: Համայնքում տարբեր տեսակի հաշմանդամների քանակը կազմում է 131, որից անչափահաս երեխաներ՝ 13: Համայնքի ընտանիքների մեծ մասը խոցելի են՝ բազմաբնույթ սոցիալ-առողջապահական խնդիրներով:

Համայնքի հաշմանդամների, կերակրող կորցրած ընտանիքների, ինչպես նաև սոցիալապես անապահով այլ խավերի՝ բազմազավակ ընտանիքներ, միայնակ թոշակառուներ, սոցիալական պայմանները որոշակի բարելավելու նպատակով յուրաքանչյուր տարի ըստ համայնքի բյուջեի հնարավորությունների՝ տրամադրվում են ֆինանսական օգնություններ:

### **ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ**

Համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 14-ի N16-Ն որոշումով հաստատվել է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության կարգը, աշխատակազմի կողմից ստեղծված է բոլոր անհրաժեշտ պայմանները բնակչության մասնակցությունը լիարժեք ապահովելու համար: Ներկայումս ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որը մեծապես նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու կողմից ընդունված որոշումների ու կատարած աշխատանքների վերաբերյալ: Համայնքի ինտերնետային կայքէջում տեղադրված են բոլոր փաստաթղթերը, որն ավելի է նպաստում ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ բնակչության վստահության ամրապնդմանը: Համայնքի ղեկավարի կողմից պարբերաբար կազմակերպվում և անցկացվում է համայնքի ժողովներ, որտեղ համայնքի բնակչությանը կողմից բարձրացված յուրաքանչյուր հարց քննարկվում է և սահմանված կարգով տրվում է համապատասխան ընթացք:

### **ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը ներկայումս կազմավորման փուլում է, առայժմ չի իրականացվել տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների գնահատման որևէ գործողություն, որի հիման վրա հնարավոր կլինեք պլանավորել և իրականացնել համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման գործողություններ ու միջոցառումներ: Համայնքի տարածքում հաշվառված են 8 սողանքավտանգ տեղամաս՝ <<Վերին կավանոց>>, <<Ներքին կավանոց>>, <<Գերեզմանների վերև>>, <<Գնդուներ>>, <<Խաչքրներ>>, <<Աղվեսբլներ>>, <<Բոստան կայա>> կոչվող տարածքներում, որոնք իրենցից ներկայացնում են որպես դանդաղ ընթացող աղետ: Համայնքում աղետների ռիսկերի կառավարման ուղղված 2019-2023թթ. միջոցառումների հիմքում նախատեսվում է

շարունակել սերտ համագործակցությունը ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման հետ, նրանցից ստացած գիտելիքները համայնքին բնակչությանը իրազեկելու նրանց իմացությունը բարձրացնելու հնարավոր աղետների ժամանակ պաշտպանվելու համար: ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N1351-Ն որոշմամբ սահմանված կարգով համայնքի կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների հայտ, որի արդյունքում կազմվելու է սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ: Սեյսմիկ ռիսկի նվազեցման համայնքային ծրագրերի ֆինանսավորումն իրականացնելու ենք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Համայնքի տարածքի համար բնորոշ բնածին աղետներն են՝ սողանքները, ուժեղ քամիները, ցրտահարությունը, հորդառատ անձրևները, կարկուտը: Համայնքի տարածքի համար տեխնածին աղետներ կարող են առաջանալ գազամատակարարման, էլեկտրամատակարարման համակարգերում հնարավոր վթարներից: Համայնքն ունի հաստատված քաղաքացիական պաշտպանության պլան:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ**

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող հանդիսությունների սրահի, ավտոգազալիցքավորման ճնշումային կայանի, բենզալցակայանի, առևտրի մանր խանութների գործունեությամբ, որոնց սեփականատերերի հետ համայնքապետարանի փոխհարաբերությունները գտնվում են բարձր մակարդակի՝ ջերմ ու բարյացակամ:

**2.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ**

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-երի կողմից ընտրված ռազմավարությունից, առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից և արված առաջարկություններից, համայնքի ղեկավարին կից գործող ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 7)՝ ներառելու համայնքի 2019-2023թթ. ՀՀԶԾ -ում:

Աղյուսակ 7. Համայնքի զարգացման 2019-2023թթ. ՀՀԶԾ -ում ներառելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագիրն առաջարկողը	Ծրագրի մոտավոր արժեքը, ֆինանսավորման աղբյուրը, հազար դրամ
1	Համայնքային ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների կատարում՝ Էմմա Հովեյանի տան մոտից մինչև Կոլյա Քարամյանի տան մոտի գոյություն ունեցող ասֆալտը	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2019թ.-14000.0
2	Համայնքային ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների կատարում՝ բժշկական ամբուլատորիայի մուտքի ճանապարհի գոյություն ունեցող ասֆալտապատ ճանապարհի շարունակությունը մինչև 11-րդ փողոցի ծայրամասային տները	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2020թ.- 14000.0
3	Համայնքային ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների կատարում՝ 12-րդ փողոցի մուտքի ճանապարհի	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2021թ.- 13500.0

	սկզբնամասից ասֆալտապատում մինչև փողոցի ծայրամասային տներ		
4	Համայնքային ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների կատարում Կոլյա Քարամյանի տան մոտի գոյություն ունեցող ասֆալտի շարունակումը 4-րդ փողոցի ծայրամասային տները, սարի ճանապարհի կողմից գերեզմանոցի ճանապարհի ասֆալտապատումը մինչև գոյություն ունեցող ասֆալտը	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2022թ.-12000.0 2023թ.-13000.0 և տարբեր ծրագրերի միջոցներով՝ 13000.0 Ընդհանուրը՝ 38000.0
5	Համայնքապետարանի վարչական շենքի մասնակի հիմնանորոգում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2019թ.-3500.0
6	Մանկապարտեզի շենքի մասնակի հիմնանորոգման ու ներքին հարդարման աշխատանքների կատարում, լոկալ ջեռուցման համակարգի կառուցում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2019թ.- 5000.0 2020թ.- 1500.0 2021թ.- 1500.0 2022թ.- 1500.0 և տարբեր ծրագրերի միջոցներով՝ 15000.0 Ընդհանուրը՝ 24500.0
7	Մշակույթի կենտրոնի շենքի մասնակի հիմնանորոգման ու ներքին հարդարման աշխատանքների կատարում, մարզադահլիճի հիմնանորոգում, լոկալ ջեռուցման համակարգի անցկացում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2019թ.- 2000.0 2020թ.- 2000.0 2021թ.- 2000.0 2022թ.- 2000.0 2023թ.- 2000.0 և տարբեր ծրագրերի միջոցով՝ 15000.0 Ընդհանուրը՝ 25000.0
8	Նախկին կինոդահլիճի շենքի հիմնանորոգում՝ նպատակ ունենալով բացելու մրգի չորացման արտադրամաս	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2020թ.- 3000.0 2021թ.- 2000.0 2022թ.- 2000.0 և տարբեր ծրագրերի միջոցով՝ 13000.0 Ընդհանուրը՝ 20000.0
9	9-րդ փողոցի սկզբնամասից դեպի 8-րդ փողոցի սկզբնամասը փողոցային լուսավորման նոր ցանցի կառուցում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2021թ.- 3000.0 Ընդհանուրը՝ 3000.0
10	11-րդ փողոցի մուտքի ճանապարհի սկզբնամասից փողոցային լուսավորման նոր ցանցի կառուցում մինչև <<Բոստան կայա>> կոչվող թաղամասի ծայրամասային տները	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2021թ.- 3000.0 2022թ.- 3000.0 Ընդհանուրը՝ 6000.0
11	12-րդ փողոցի մուտքի ճանապարհի սկզբնամասից փողոցային լուսավորման նոր ցանցի կառուցում մինչև <<Երկար գործեր>> կոչվող	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2022թ.- 3000.0 2023թ.- 3000.0 Ընդհանուրը՝ 6000.0

	թաղամասի ծայրամասային տները		
12	Կոլյա Քարամյանի տան մոտից մինչև Ջոհրաբ Անտոնյանի օժանդակ շինության մոտ փողոցային լուսավորման նոր ցանցի կառուցում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2023թ.- 3000.0 Ընդհանուրը՝ 3000.0
13	<<Դարի գլուխ>>, <<Բոստան կայա>>, <<Երկար գործեր>> կոչվող տարածքներում նոր ձևավորված թաղամասերի համար խմելու և ոռոգման ջրագծերի կառուցում, էլեկտրամատակարարման ու գազամատակարարման համակարգերի կառուցում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2020թ.-2000.0 և մատակարար կազմակերպություններ՝ ըստ իրենց զարգացման ծրագրերի շրջանակներում՝ 2019-2023 թթ.-20000.0 Ընդհանուրը՝ 22000.0
14	Ջրամատակարարման ներտնտեսային ցանցի երկու խողովակաշարերի՝ <<Կոստոյ թաղ>>, <<Գերեզմանների թաղ>>, <<Բարբոի թաղ>>, <<Համալիր>>, <<Բոստան կայա>>, <<Երկար գործեր>> կոչվող տարածքների սպասարկող թաղամասային ջրագծերի հիմնանորոգում <<Չոի ձոր>> կոչվող տարածքում և այլ հատվածներում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2019թ.-5000.0 Ընդհանուրը՝ 5000.0
15	Ջրամատակարարման ներտնտեսային ցանցի խողովակաշարի՝ Հովսեփյան Վաչագանի տան մոտով անցնող խմելու կենտրոնական ջրագծի հիմնանորոգում մինչև Սոսին Քարամյանի տան հետևի հատվածը	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2020թ.-5000.0 2021թ.-5000.0 Ընդհանուրը՝ 10000.0
16	Ջրամատակարարման ներտնտեսային ցանցի խողովակաշարի՝ Դմիտրի Այվազյանի տան մոտից դեպի <<Փինաչու թաղ>> կոչվող թաղամասի խմելու ջրագծի հիմնանորոգում մինչև Ռաֆիկ Ալավերդյանի տան մոտը	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2022թ.- 4000.0 2023թ.- 4000.0 Ընդհանուրը՝ 8000.0
17	Դրենաժային ջրահեռացման ցանցի պարբերաբար մաքրման աշխատանքների կատարում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2019թ.- 1500.0 2020թ.- 2000.0 2021թ.- 2000.0 2022թ.- 2000.0 2023թ.- 2000.0 Ընդհանուրը՝ 9500.0
18	Ոռոգման 3-րդ կարգի ջրանցքների նոր բաց ցանցի կառուցում՝ 5-րդ փողոցի 1-ին նրբանցք, 17-րդ փողոց, 21-րդ փողոց	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2019թ.-10500.0 Պետական բյուջե՝ 24500.0 Ընդամենը՝ 35000.0

19	Արտավայրերում նոր փարախների կառուցում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2021թ.- 2500.0 2022թ.- 2500.0 Ընդամենը՝ 5000.0 և գյուղատնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսավորման միջոցով շինարարության իրականացում՝ 25000.0 Ընդհանուրը՝ 30000
20	Ոռոգման 3-րդ կարգի ջրանցքների նոր բաց ցանցի կառուցում՝ <<Կանդարա>> կոչվող տարածքում Հենրիկ Չոլոյանի հողամասի մոտի գոյություն ունեցող կառուցված ցանցի շարունակությունը մինչև <<Թամկի դար>> կոչվող տարածքի տնամերձ հողամասերի սահմանանիշը, 11-րդ փողոց, 12-րդ փողոց, 25-րդ փողոց, 2-րդ փողոց	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2020թ.- 6000.0 2021թ.- 6000.0 Ընդամենը՝ 12000.0 Պետական բյուջե՝ 2020թ.- 15000.0 2021թ.- 15000.0 Ընդամենը՝ 30000.0 Ընդհանուրը՝ 42000.0
21	Համայնքային գերեզմանատան պարսպատման կառուցապատման աշխատանքների իրականացում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Տարբեր աղբյուրների միջոցներով՝ 15000.0 Ընդհանուրը՝ 15000.0
22	Խորքային նոր հորի կառուցում ոռոգման նպատակով	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2023թ.- 4000.0 Ընդամենը՝ 4000.0 և տարբեր աղբյուրների միջոցներով՝ 36000.0 Ընդհանուրը՝ 40000.0
23	Արևային էներգիայիով աշխատող խնայող կայանի հիմնում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2023թ.- 10000.0 Ընդամենը՝ 10000.0 և տարբեր աղբյուրների միջոցներով՝ 40000.0 Ընդհանուրը՝ 50000.0
24	Պտղատու նոր այգու հիմնում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2021թ.- 1000.0 Ընդամենը՝ 1000.0 և տարբեր աղբյուրների միջոցներով՝ 5000.0 Ընդհանուրը՝ 6000.0
25	<<Յոթ բուբ>> կոչվող տարածքի հարակից տարածքում խմելու ջրամատակարարման նոր ցանցի կառուցում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Տարբեր աղբյուրների միջոցներով՝ 2020-2023թթ.- 20000.0 Ընդհանուրը՝ 20000.0
26	Սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների ներառման, սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նախատեսում	ՀՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ	Համայնքի բյուջե՝ 2019թ.- 500.0 2020թ.- 500.0 2021թ.- 500.0 2022թ.- 500.0 2023թ.- 500.0 և տարբեր աղբյուրների

		միջոցով՝ 37500.0 Ընդհանուրը՝ 40000.00
--	--	--

Ինչպես երևում է ՀՀԶԾ -ի 4-րդ բաժնի աղյուսակ 5-ից, համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերը հնգամյա հատվածում կազմելու են 683,159.7 հազար դրամ: Դա նշանակում է, որ համայնքի բյուջեի ֆինանսավորմամբ ՀՀԶԾ -ում հնարավոր է ներառել ծրագրեր միայն նշված գումարի սահմաններում: Համայնքի բյուջեում եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 32 %:

Համայնքի 2019-2023թթ. ՀՀԶԾ -ում ներառված ընդհանուր և ոլորտային ծրագրերի ֆինանսական ամբողջական ապահովվածությունը և իրատեսականությունը մեծապես կախված է նաև համայնքի արդյունավետ համագործակցությունից պետական կառավարման մարմինների, դոնոր կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ՝ ապահովելու վերջիններիս կողմից ակնկալվող ֆինանսական ներդրումները ՀՀԶԾ -ում ներառված համապատասխան ոլորտային ծրագրերում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾՄԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

2019-2023թթ. ընթացքում համայնքի ՏԻՄ-երը նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Համայնքում պետության կողմից ծրագրերի իրականացումը ապահովելու նպատակով անհրաժեշտ է սերտ համագործակցել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ՝ 2019-2023թթ-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- Համայնքի թիվ 2 միջնակարգ դպրոցի վթարային շենքի քանդում և նոր մասնաշենքի կառուցում
- Համայնքի ազգաբնակչությանը մատչելի գներով պարարտանյութերի, թունաքիմիկատների, բարձր որակի սերմացուների տրամադրում  
Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում:

**2.4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ**

Կատարելով համայնքի 2019-2023թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումները՝ որպես ելակետային տվյալներ ընդունվել են 2017- 2018թթ. բյուջեների մուտքերի փաստացի գանձման ցուցանիշները՝ յուրաքանչյուր տարի նախատեսելով որոշակի աճ:

Աղյուսակ 5. Համայնքի 2017-2018թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2019-2023թթ. բյուջեի մուտքերի կանխատեսումները

/հազար դրամ/

Եկամուտի անվանումը	2017թ		2018թ		Ըստ տարիների				
	նախատես	փաստացի	նախատես	փաստացի	2019	2020	2021	2022	2023
Ընդամենը եկամուտներ	125012.8	129428.1	129751.7	130714.0	136324.1	136708.9	136708.9	136708.9	136708.9
1. Հարկեր և տուրքեր	31649.3	35858.4	33860.8	35787.5	35286.6	35421.8	35421.8	35421.8	35421.8
Այդ թվում 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	9549.3	10983.0	9860.8	11220.5	10771.8	10771.8	10771.8	10771.8	10771.8
Այդ թվում Գույքահարկ համայնքի տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար	149.0	527.6	284.0	716.0	295.4	295.4	295.4	295.4	295.4
Հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար	9399.9	10455.4	9576.4	10504.5	10476.4	10476.4	10476.4	10476.4	10476.4
1.2 Գույքային հարկեր այլ գույքից	21700.0	24029.7	23250.0	23930.5	24115.0	24200.0	24200.0	24200.0	24200.0
Այդ թվում Գույքահարկ փոխադրամիջոցների համար	21700.0	24029.7	23250.0	23930.5	24115.0	24200.0	24200.0	24200.0	24200.0
Տեղական տուրքեր	600.0	845.7	750.0	636.4	400.0	450.0	450.0	450.0	500.0
2.Պաշտոնական դրամաշնորհներ	83351.6	83351.4	85755.8	85755.8	92750.2	93000.0	93000.0	93000.0	93000.0



Որից՝ ա/ Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ	0	0	15.0	15.0	-	-	-	-	-
բ/ Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ	4808.0	4808.0	-	-	-	-	-	-	-
<b>3. Այլ եկամուտներ</b>	<b>2600.0</b>	<b>2931.2</b>	<b>10120.4</b>	<b>8976.6</b>	<b>8287.1</b>	<b>8287.1</b>	<b>8287.1</b>	<b>8287.1</b>	<b>8287.1</b>
Այդ թվում ա. Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	2000.0	2243.2	2000.0	2327.2	2000.0	2000.0	2000.0	2000.0	2000.0
բ. Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	600.0	688.0	730.0	650.0	730.0	730.0	730.0	730.0	730.0
<b>3.2 Վարչական գանձումներ</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>7390.0</b>	<b>5999.5</b>	<b>5557.1</b>	<b>5557.1</b>	<b>5557.1</b>	<b>5557.1</b>	<b>5557.1</b>
Այդ թվում՝									
Աղբահանության վճար	-	-	5230.4	5067.3	4616.3	4616.3	4616.3	4616.3	4616.3
Ջրամատակարարման վճար	-	-	2160.0	752.8	940.8	940.8	940.8	940.8	940.8
<b>3.3 Մուտքեր տույժերից, տուգանքներից</b>	<b>0</b>	<b>75.1</b>	<b>0</b>	<b>179.4</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>
Այդ թվում՝ Վարչական իրավախախտումների համար կիրառումից եկամուտներ	0	75.1	0	179.4	-	-	-	-	-
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	0	371.2	0	114.9					
Այդ թվում՝ Հողի օտարումից մուտքեր	0	371.2	0	114.9					
Պակասորդի ֆինանսավորման աղբյուր /տարեսկզբի ազատ մնացորդներ/	10712.1		15450.9		16586.8	10355.2	10260.7	11360.7	10710.7

Հաշվեկշիռ	135724.9	129428.1	145202.6	130714.0	152910.9	153000.0	153500.0	154000.0	155000.0
-----------	----------	----------	----------	----------	----------	----------	----------	----------	----------

Աղյուսակ 6. Համայնքի 2017-2018թթ. բյուջեների ելքերի ցուցանիշները և 2019-2023թթ. բյուջեների ելքերի կանխատեսումները

/հազար դրամ/

	Ծախսերի անվանումը	Ըստ տարիների								
		2017թ.	2017թ.	2018թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.	2023թ.
		նախատես	փաստացի	նախատես	փաստացի	նախատես	նախատես	նախատես	նախատես	նախատես
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	47661.4	43349.7	47476.4	42168.6	51400.4	50800.0	51000.0	51000.0	51000.0
2	Տնտեսական հարաբերություններ	24570.1	23384.5	37635.2	29012.4	31800.8	33000.0	32000.0	32000.0	32500.0
3	Շրջակա միջավայրի պաշտպանություն	7660.0	7660.0	5230.4	5067.0	4616.3	4616.3	4616.3	4616.3	4616.3
4	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	13856.0	12721.5	17811.6	16538.0	17608.0	19000.0	19500.0	19500.0	20000.0
5	Հանգիստ, մշակույթ և կրոն	11340.0	12267.0	12200.0	11992.0	12200.0	12400.0	12400.0	12500.0	12500.0
6	Կրթություն	22500.0	22222.3	22349.0	22226.2	24635.0	24700.0	24700.0	24700.0	25000.0
7	Սոցիալական պաշտպանություն	4000.0	3980.0	2500.0	2500.0	2700.0	2800.0	2900.0	3000.0	3000.0
8	Պահուստային ֆոնդ	4137.4	3764.0	801.9	2541.8	7950.4	5683.7	6383.7	6683.7	5383.7

Ընդամենը	135724.9	129349.0	145202.6	129504.2	152910.9	153000.0	153500.0	154000.0	155000.0
----------	----------	----------	----------	----------	----------	----------	----------	----------	----------

## 2.5 ԶԱՐԳԱՑԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի առջև ծառայած հիմնախնդիրները հետևյալ են՝

- 1) Աշխատատեղերի ստեղծումը
- 2) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը
- 3) Թիվ 2 միջնակարգ դպրոցի նոր շենքի կառուցումը
- 4) Գյուղատնտեսության զարգացման խթանումը
- 5) Ճանապարհների ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը

Վերը նշված՝ ծրագրերի իրականացման հիմնական խոչընդոտ է հանդիսանում համայնքի ֆոնդային բյուջեի սահմանափակ լինելը: Համայնքի առջև ծառայած հիմնախնդիրների լուծումը գրեթե պահանջում են կապիտալ ներդրումներ: Համայնքում գործարար միջավայրի բարելավման և ձեռներեցության խթանման խոչընդոտներից են բանկերից հատկացվող վարկերի բարձր տոկոսադրույքները, հարկային արտոնությունների բացակայությունները: Դժվարություններ կան համայնքի երիտասարդության խնդիրների լուծման հետ՝ կապված աշխատատեղերի, ակտիվ մշակութային և մարզական միջոցառումների կազմակերպման ու անցկացման հետ:

## 2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՎ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքում երկու դպրոցի առկայությունը
- Համայնքում մանկապարտեզի առկայությունը
- Համայնքում մշակույթի տան առկայությունը
- Համայնքում բժշկական ամբուլատորիայի առկայությունը
- Համայնքում գազաֆիկացվածության աստիճանը
